ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԿԱՐԵՆ ԱՐՏԱԿԻ

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.03 – մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАРЕН АРТАКОВИЧ МЕЛИКСЕТЯН

СИСТЕМА ОРГАНОВ УПРАВЛЕНИЯ ВЕНЧУРНЫХ АКЦИОНЕРНЫХ ОБЩЕСТВ И ХАРАКТЕРИСТИКИ ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 - Частное право; гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2024

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**
Վահրամ Դավիթի Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**
Արմեն Մերուժանի Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արսեն Աշոտի Թավադյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հոկտեմբերի 24-ին, ժամը 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թ. սեպտեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена
в Ереванском государственном университете

Научный руководитель: **доктор юрид. наук, профессор**
Ваграм Давидович Аветисян

Официальные оппоненты: **доктор юрид. наук, профессор**
Армен Меружанович Айкянц
кандидат юрид. наук, доцент
Арсен Ашотович Тавадян

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 24-ого октября 2024г., в 14^{30} часов, на заседании специализированного совета КВОН 001 при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 16-ого сентября 2024 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես համաշխարհային տնտեսական հարաբերությունների ինքնուրույն մասնակից, իր՝ կայուն տնտեսական զարգացման ռազմավարական նշանակություն ունեցող միջոցառումների շարքում պարբերաբար իրականացնում է օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետությունում գործարարական գործունեություն իրականացնող ռեզիդենտ, ինչպես նաև այստեղ ներդրումներ կատարելու մտադրություն ունեցող ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նպաստավոր օրենդրական դաշտ ստեղծելուն՝ այդպիսով ապահովելով նաև ոլորտի շարունակական զարգացումը: Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևոր շարժիչ ուժերից են հանդիսանում տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ «SS») ոլորտում ներգրավված ընկերությունները, որոնց հիմնական մասը ստեղծման փուլում լինում է ստարտափի ձևով, այսինքն՝ սկզբնապես ունենում է ֆինանսական և այլ ռեսուրսներ ներգրավելու կարիք: Այդ նկատառումներով ստարտափային ընկերությունների հիմնադիրները փորձում են իրենց մասնակիցների շարքերում որպես ներդրողներ ընդգրկել նման ռեսուրսներ տրամադրելու հնարավորություն ունեցող այլ անձանց: Համաշխարհային տնտեսության մակարդակով, իսկ վերջին տարիներին նաև Հայաստանի Հանրապետությունում սկսնակ, հատկապես SS ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների նկատմամբ հետաքրքրվածությունը մեծանում է, տարբեր ներդրողներ, այդ թվում նաև վենչուրային տարբեր ընկերություններ, հրեշտակ ներդրողներ և այլ անձինք (այսուհետ նաև՝ «վենչուրային ներդրող») մասնակցություն ձեռք բերելու դիմաց դրանց տրամադրում են ֆինանսական և այլ միջոցներ: Հայաստանի Հանրապետության պետական տարբեր մարմինների մակարդակով բազմիցս հնչեցվել է այն միտքը, որ SS ոլորտի զարգացումն ունի կարևորագույն նշանակություն Հայաստանի Հանրապետության համար, քանի որ այլ ռեսուրսների սղության կամ բացակայության պայմաններում պետք է փորձել զարգացնել տնտեսության այն ճյուղերը, որոնք գիտելիքահեն են և կարող են արագ ապահովել բարձր տնտեսական աճ: Նման ընկերությունների թվի ավելացման և զարգացման կարևորա-

գույն պայմաններից է օրենսդրական այնպիսի դաշտի ձևավորումը, որը կնպաստի ներդրումների ներգրավմանը և ներդրողի համար կապահովի օրենսդրական կայուն երաշխիքներ իրավունքների ապահովման և պաշտպանության տեսանկյունից: Նմանատիպ ընկերությունների մասնակցությամբ ծագող կորպորատիվ հարաբերությունների օրենսդրական կարգավորվածության բարձր մակարդակի և ժամանակակից զարգացումներին համապատասխանության կարևոր ցուցիչներից է այն հանգամանքը, որ օրենքով նախատեսվեն իրավաբանական անձանց այնպիսի կազմակերպաիրավական ձևեր, որոնք կապահովեն ներդրող-ընկերություն կայուն կապը, կնպաստեն նոր և մեծածավալ ներդրումների ներգրավմանը, երկուստեք ընկերության ու նրա մասնակիցների համար կերաշխավորեն կորպորատիվ իրավունքների իրացվելիության հնարավորություն, չարաշահումների ռիսկի նվազեցում, կատարված ներդրումների դիմաց ակնկալվող շահույթի և լրացուցիչ իրավունքների ձեռքբերում ու իրավունքների հավանական խախտումների դեպքում պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևերը թույլ չեն տալիս արդյունավետ կերպով լուծել և իրագործել այն խնդիրներն ու նպատակները, որոնք դրված են ժամանակակից ստարտափային ընկերությունների, դրանց կառավարման մարմինների, մասնակիցների, վենչուրային ներդրողների առջև: Ուստի անհրաժեշտ ենք համարում Հայաստանի Հանրապետությունում ստարտափային ընկերությունների ստեղծման և գործունեություն ծավալելու համար պրակտիկայում կիրառվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերի ուսումնասիրության միջոցով վեր հանել առկա տեսական և գործնական խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված վերլուծություններ, ընդհանրացումներ և առաջարկներ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ատենախոսության շրջանակներում հիմնավորել է բաժնետիրական ընկերության նոր տեսակի՝ «վենչուրային բաժնետիրական ընկերության» (այսուհետ՝ նաև «ՎԲԸ») ստեղծման անհրաժեշտությունը: ՎԲԸ-ների՝ որ-

պես բաժնետիրական ընկերության նոր տեսակի ներդրումը հնարավորություն կտա օրենսդրական ինքնատիպ կարգավորման ենթարկել ՎԲԸ-ների կորպորատիվ կառավարման առանձնահատկությունները, ժամանակակից պահանջներին համապատասխան բանաձևել և մոդելավորել ՎԲԸ-ների մասնակիցների, ինչպես նաև վենչուրային ներդրողների իրավունքները և պարտականությունները, ներկորպորատիվ հարաբերություններում ներառված սուբյեկտների պատասխանատվության առանձնահատկությունները:

Վկայակոչված հիմնախնդիրների պատշաճ և արդյունավետ լուծումից է կախված Հայաստանի Հանրապետությունում գործարարական գործունեությամբ զբաղվելու գրավչության բարձրացումն ու ներդրումների ներգրավումը, ինչի կարևոր նախադրյալ է, ի թիվս այլնի, օտարերկրյա դրական փորձի ներդաշնակումն ու տեղայնացումը՝ ներպետական օրենսդրության և պրակտիկայի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հետևապես, մատնանշված խնդիրների վերհանումն ու լուծումը հրամայական են դարձնում սույն թեմայի ուսումնասիրությունն ու տեսագործնական առաջարկների ներկայացումը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:

Կորպորացիաների կառավարման մարմինների և պատասխանատվության հարցերը տնտեսական ընկերությունների օրինակով հայրենական իրավագիտության մեջ համալիր ուսումնասիրության առարկա են դարձել պրոֆեսոր Վ. Ավետիսյանի կողմից («Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում»): Թեմային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասով որոշակիորեն անդրադարձել է Գ. Հարությունյանը («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ»), իսկ բաժնետիրական ընկերությունների կապակցությամբ՝ Ս. Պետրոսյանը («Բաժնետիրական ընկերությունը որպես կապիտալների ներգրավման և միավորման իրավական մեխանիզմ»):

Այդուհանդերձ, նկատենք, որ դրանցով քննարկման առարկա չեն դարձել ՎԲԸ-ները և դրանց առանձնահատկությունները, որոնք, որպես նորույթ, ուսումնասիրվել և վերլուծվել են սույն աշխատության շրջանակներում:

Ինչ վերաբերում է արտասահմանյան իրավաբանական գրականությանը, ապա խնդրո առարկա հարցերը համակողմանիորեն ուսումնասիրել են տարբեր գիտնականներ, այդ թվում՝ Բ. Ֆելդը, Ջ. Մենդելսոնը, Մ. Լևիսը, Թ. Անդերսոնը, Գ. Նապիերը, Դ. Արոնսոնը, Ս.Դասարին, Ա. Գուդմանը, Ջ. Վոլֆը, Ա. Լոսը, Տ. Դր Մըքկասկիլը, Ս. Ֆորրեստերը, Ս. Ֆերբերը, Ջ. Սմիթը, Ս. Գերներ-Բյուրլեն, Պ. Պաեչը, Ե. Ֆիլիպ Շուստերը, Պ. Ջիուդիցին, Պ. Ագստները, Գ. Մաասսենը, Ք.Պ. Պավլովան, Տ.Վ. Գրիբկովան, Մ.Վ. Տրուբինան, Օ.Վ. Գուտնիկովը, Ս.Վ. Ֆեդոսեևը, Ե.Վ. Չերնոկալցևան, Ի.Ա. Տիմաևան, Ա.Ա. Կուզնեցովը, Դ.Ա. Տոկարևը, Յա. Ա. Սմիրնովան, Դ.Ա. Սումսկոյը, Դ.Ռ. Ֆեյզրախմանովան, Դ.Վ. Պլեշկովը, Մ.Ի. Ինոզեմցևը, Ա.Վ. Սավիկովը, Մ.Դ. Տիխոմիրովը, Ա.Ռ. Անդրեևան, Ե.Մ. Խեգայը, Ա. Ն. Զախարովը, Դ.Դ. Բիկանովը, Վ.Վ. Պրոխորենկոն, Ս.Ա. Գինկոն և այլք:

Վերջինների, ինչպես նաև հայրենական ու օտարերկրյա կորպորատիվ իրավունքի այլ գիտնականների աշխատությունները կազմում են հետազոտության տեսական հիմքը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության **օբյեկտն** են կազմում ՎԲԸ-ների կառավարման մարմինների համակարգի և պատասխանատվության կապակցությամբ ծագող, փոփոխվող և դադարող իրավահարաբերությունները, իսկ **առարկան**՝ ՎԲԸ-ների կառավարման մարմինների համակարգն ու պատասխանատվության առանձնահատկությունները կանոնակարգող օրենսդրությունը:

Ընդ որում՝ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում գործնականում բացակայում են տնտեսական ընկերակցությունները, հետազոտվել են ՎԲԸ-ները, սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունները, բանկային, վարկային և ապահովագրական գործունեությամբ զբաղվող կորպորացիաները՝ համեմատելով և արձանագրելով ՎԲԸ-ների և մյուս կորպորացիաների նմանություններն ու տարբերությունները:

Նկատի ունենալով, որ ՎԲԸ-ները բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև «ԲԸ») հատուկ տեսակ են՝ աշխատությունը կառուցվել է ընդհանուր (բաց և փակ) և հատուկ (ՎԲԸ) տեսակի բաժնետիրական ընկերությունների ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների իրավահամեմատական վերլուծության տրամաբանությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում ՎԲԸ-ների կառավարման մարմինների համակարգի, այդ համակարգի բաղադրիչների և դրանց պատասխանատվության բնութագիրը, բովանդակությունը, հատկանիշները և առանձնահատկությունները, վեր հանել ՎԲԸ-ների (դրանց մարմինների) գործունեության ընթացքում և պատասխանատվության շրջանակներում առաջացող տեսական և գործնական բնույթի խնդիրները և հիմնավորված առաջարկներ ներկայացնել դրանց արդյունավետ և համալիր լուծման համար:

Բացի նշվածից, սույն հետազոտության նպատակն է հիմնավորել Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ ՎԲԸ-ի՝ որպես առանձին տեսակի բաժնետիրական ընկերության հայեցակարգի ներդրման անհրաժեշտությունը:

Հիշատակված նպատակների նվաճման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**՝

1) բացահայտել կորպորատիվ տիպի և այդպիսին չհամարվող իրավաբանական անձանց ընդհանուր բնութագիրն ու տարբերակման չափանիշները (հատկանիշները), ինչպես նաև կորպորացիաներին ներհատուկ առանձնահատկությունները,

2) հետազոտել ՎԲԸ-ները, դրանց բնորոշ հատկանիշներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև ընդհանուր տեսակի (բաց և փակ) բաժնետիրական ընկերությունների հետ ունեցած նմանություններն ու տարբերությունները,

3) վեր հանել ՎԲԸ-ների կառավարման մարմինների համակարգն ու դրա բաղադրիչների (մարմինների) էությունն ու իրավական բնույթը, մոդելը, գործառույթները, իրավասությունը՝ դրանից բխող լիազորությունների շրջանակով,

4) հետազոտել ՎԲԸ-ների և դրանց կառավարման մարմինների (անդամների) պատասխանատվությունը, դրա հատկանիշները, պայմանները, իրավախախտումները, պատասխանատվության միջոցները, ինչպես նաև հարաբերակցությունը պատասխանատվության այլ տեսակների հետ,

5) վերլուծել հսկող (հիմնական) և հսկվող (դուստր և կախյալ) կորպորացիաների միջև փոխհարաբերությունները և դրանց շրջանակներում վրա

հասնող պատասխանատվության ընդհանուր գծերն ու բնորոշ հատկանիշ-ները, կիրառման պայմաններն ու կարգը,

6) ներկայացնել ՎԲԸ-ներում իրավունքի չարաշահման բնութագիրը, դրսևորման ձևերն ու տեսակները, կանխման տարբերակները, կորպորատիվ իրավունքների չարաշահման պարագայում առաջացող իրավական հետևանքները (պատասխանատվության միջոցները) և պաշտպանության եղանակները,

7) բացահայտել ՎԲԸ-ներում բաժնետիրական համաձայնագրերի, ինչպես նաև ներդրման համաձայնագրերի խախտմամբ պայմանավորված պատասխանատվության բնույթը, այդպիսի պատասխանատվության առաջացման հիմքերն ու պայմանները, պատասխանատվության հատուկ միջոցները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Ատենախոսության իրավական (նորմատիվ) հիմքը կազմում է կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների օրենսդրությունը, իսկ փորձառական հիմքը ներառում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական, վճռաբեկ, վերաքննիչ քաղաքացիական և ընդհանուր իրավասության առաջին ատյանի, օտարերկրյա պետությունների դատարանների դատական ակտերը (դատական պրակտիկան), մի շարք կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կանոնադրություններ և ներքին կանոնակարգող փաստաթղթեր:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ընդհանրացում և այլն), այնպես էլ մասնագիտական հատուկ (դիալեկտիկական, ձևական-տրամաբանական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական, կառուցվածքային-գործառութային և այլն) մեթոդներ: Կիրառված մեթոդոլոգիան հնարավորություն է տվել համապարփակ ուսումնասիրել ՎԲԸ-ների կառավարման մարմիններին ու պատասխանատվությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության և այլ երկրների օրենսդրությունը, դատական պրակտիկան, գիտահետազոտական աշխատությունները և, որպես արդյունք, տեսական ու պրակտիկ խնդիրների լուծման համար ներկայացնել գիտագործնական առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը, իր առջև դրված նպատակների ու խնդիրների հաշվառմամբ, հայրենական իրավագիտության մեջ առաջին խոր և համապարփակ աշխատանքն է, որի շրջանակներում հիմնավորվել է ՎԲԸ-ների՝ որպես բաժնետիրական ընկերության նոր տեսակի ստեղծման գաղափարը, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպաիրավական ձևերի իրավահամեմատական վերլուծության շրջանակներում հետազոտվել են ՎԲԸ-ների կառավարման մարմինների համակարգը, այդ մարմինների բնութագրերն ու հատկանիշները, նրանց պատասխանատվության առանձնահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթը արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, եզրակացությունում, հավելվածում, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերի և տեսակների ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումները ժամանակակից տնտեսական հարաբերություններին համահունչ լիաժեք կերպով չեն կարգավորում ստարտափային ընկերությունների ստեղծման, դրանց ինքնատիպ կորպորատիվ կառավարման և պատասխանատվության հետ կապված հարաբերությունները, ինչը բացասական ազդեցություն է ունենում Հայաստանի Հանրապետությունում վենչուրային կապիտալի և այլ ներդրումների ներգրավման վրա:

Նշված տեսական և գործնական խնդիրների լուծման նպատակով, հաշվի առնելով միջազգային փորձը և սույն հետազոտության շրջանակներում վեր հանված վենչուրային բաժնետիրական ընկերություններին բնորոշ հատկանիշները՝ առաջարկվում է որպես բաժնետիրական ընկերության հատուկ տեսակ առանձնացնել վենչուրային բաժնետիրական ընկերությունը, և առանձին օրենքով կանոնակարգել ՎԲԸ-ների կառավարման մարմինների ձևավորման, գործունեության, վենչուրային ներդրողների իրավական կարգավիճակի, վերջիններին պատկանող հատուկ իրավունքների,

արտոնությունների, առավելությունների, պատասխանատվության և այլ առանձնահատկությունների հետ կապված հարաբերությունները:

2. ՎԲԸ-ների կառավարման բարձրագույն մարմնի՝ բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող սուբյեկտների և վերջիններին վերապահված իրավազորությունների առնչությամբ կատարված տեսագործնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ժողովին մասնակցելիս վենչուրային ներդրողների իրավունքները էականորեն տարբերվում են ԲԸ օրենքով բաժնետերերի համար նախատեսված իրավունքներից, որպիսի հանգամանքը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ հաշվի առնված ու կարգավորված չէ: Գտնում ենք, որ նշված իրավիճակում բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպաիրավական ձևի կիրառումը կարող է հանգեցնել գործնականում կիրառություն ունեցող վենչուրային ներդրողների իրավունքների, արտոնությունների և/կամ առավելությունների սահմանափակման կամ դրանց անիրագործելիության:

Ուստի, նշված խնդրի լուծման նպատակով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսել և հստակ կանոնակարգել վենչուրային ներդրողների՝ հատուկ ձայնի, հատուկ նախապատվության, արտոնյալ դիվիդենտ ստանալու, փոխարկման տնտեսական/ֆինանսական և հսկողական իրավունքները, ինչպես նաև լիկվիդացիոն, ժամանակային ներդրումների արտոնությունները և առավելությունները:

3. Տնօրենների խորհրդի ձևավորման, գործունեության և որոշումների կայացման կարգի վերաբերյալ ԲԸ օրենքով սահմանված կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ գործող օրենսդրությամբ նախատեսված կառուցակարգերը վենչուրային ներդրողների համար չեն ապահովում խորհրդի գործունեության նկատմամբ մշտական և լիարժեք հսկողություն իրականացնելու, ինչպես նաև իրենց շահերը խախտող կորպորատիվ որոշումներ կայացնելիս դրանք արգելափակելու, համարժեք փոխհատուցում ստանալու արդյունավետ մեխանիզմներ: Նշված իրավիճակը վենչուրային ներդրողների համար ստարտափային ընկերություններում ներդրումներ կատարելը դարձնում է ոչ գրավիչ և ռիսկային:

Ուստի, նշված խնդիրները լուծելու համար առաջարկվում է իրավական կարգավորման ենթարկել վենչուրային ներդրողների կողմից խորհրդի

գործունեության արդյունավետ հսկողության հնարավորություն ընձեռող խորհրդի դիտորդ անդամի կարգավիճակի, ՎԲԸ-ի գործունեության ծավալմանը զուգահեռ խորհրդի անդամների քանակի ավելացման, վենչուրային ներդրողների իրավունքների իրականացման՝ սույն հետազոտության շրջանակներում առաջարկված պաշտպանիչ դրույթների և խորհրդի անդամներին տրամադրվող փոխհատուցումների հետ կապված իրավահարաբերությունները:

4. Տնտեսական ընկերությունների գործադիր մարմինների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետությունում պատշաճ իրավակարգավորման ենթարկված չեն միջազգային պրակտիկայում վենչուրային կապիտալի հիման վրա գործող ընկերություններին բնորոշ գործադիր մարմնի գործունեությանը մասնակիցների ուղղակի կամ միջնորդավորված մասնակցության, գործադիր մարմնի գործունեության նկատմամբ օպերատիվ հսկողության իրականացման կառուցակարգերի ներդրման հետ կապված հարաբերությունները, ինչը վենչուրային ներդրողներին կարող է զրկել գործադիրի գործունեության արդյունավետ մշտադիտարկման հնարավորությունից:

Վեր հանված խնդրի լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել վենչուրային ներդրողների կողմից գործադիր մարմնի գործունեությունը տարբեր ձևաչափերով ուսումնասիրելու, հաշվետվությունները և այլ փաստաթղթեր ստուգելու հնարավորություն նախատեսող սույն հետազոտության շրջանակներում ներկայացված կառավարման իրավունքները: Բացի այդ, առաջարկվում է ՎԲԸ-ների գործադիր մարմինների համակարգում ներառել հատուկ գործադիր մարմնի կառուցակարգը, որի կողմից որոշումների ընդունման համար պահանջվում է վենչուրային ներդրողների կամ նրանց նշանակած անդամների համաձայնությունը կամ բոլոր անդամների կամ նրանց մի մասի միաժամանակյա համաձայնությունը:

5. Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, նրանց կառավարման մարմինների և մասնակիցների կորպորատիվ պատասխանատվության բնույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ իրավունքի տեսության մեջ նշված խնդրի վերաբերյալ

միասնական մոտեցում առկա չէ: Մասնավորապես, առկա են տարակարծություններ այն հարցերի կապակցությամբ, թե արդյոք կորպորատիվ պատասխանատվությունը պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, թե քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթատեսակ, արդյոք քաղաքացիական օրենսդրությունը կիրառելի է կորպորատիվ պատասխանատվության նկատմամբ, և եթե այո, ապա ինչ չափով և պայմաններում: Նշվածը կարող է և հանգեցնում է խնդրո առարկայի ոչ միատեսակ մեկնաբանության և երբեմն նաև օրենքի ոչ միասնական կիրառության՝ խաթարելով այդ կառուցակարգի գործնականում պատշաճ իրացումը:

Սույն հետազոտության շրջանակներում կատարված տեսագործնական վերլուծությունների արդյունքում գտնում ենք, որ կորպորատիվ պատասխանատվությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որը զուգահեռաբար mutatis mutandis քաղաքացիական իրավունքի հետ lex specialis derogat legi generali կանոնի կիրառմամբ կիրառվում է կորպորատիվ իրավահարաբերություններում և առանձնանում է պատասխանատվության առաջացման հիմքերով, պայմաններով, իրավախախտումների առանձնահատկությամբ և կիրառելի ինքնատիպ պատասխանատվության միջոցներով:

Նշվածը ընդհանրացնելով ՎԲԸ-ների մասնակիցների կողմից օրենքով, կանոնադրությամբ, բաժնետիրական կամ ներդրման համաձայնագրով նախատեսված կորոպորատիվ պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նրանց վերապահված հատուկ իրավունքները, արտոնությունները և առավելությունները չարաշահելու, ինչպես նաև ՎԲԸ-ների կառավարման մարմինների անդամների կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հարաբերությունների նկատմամբ, առաջարկվում է ՎԲԸ-ների վենչուրային ներդրողների համար որպես կորպորատիվ պատասխանատվության հատուկ միջոցներ նախատեսել նրանց վերապահված վերը թվարկված որոշ իրավունքներից, արտոնություններից և առավելություններից զրկելը կամ դրանք սահմանափակելը, իսկ կառավարման մարմինների անդամների պատասխանատվության հարաբերությունների նկատմամբ կիրառելի համարել ԲԸ օրենքով նախատեսված հիմքերն ու պայմանները:

6. ՎԲԸ-ների նկատմամբ հսկողության հարաբերությունների առաջացման հնարավոր հիմքերի, ինչպես նաև նման հսկողություն իրականացող սուբյեկտների շրջանակի բացահայտման ուղղությամբ կատարված վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ կան որոշակի տարընթերցումներ՝ կապված հսկողության հարաբերությունների առաջացման հիմքերի հետ: Նշված խնդրին որոշակիորեն փորձ է արվել լուծում տալ դատական պրակտիկայի միջոցով՝ ամրագրելով, որ հսկողության հարաբերություններ կարող են առաջանալ օրենքով չարգելված որևէ կառուցակարգի առկայության պայմաններում: ՎԲԸ-ների պարագայում նման հարաբերությունների առաջացման հիմք կարող են լինել, օրինակ, վենչուրային ներդրողի և ՎԲԸ-ի միջև կնքված ներդրման կամ բաժնետիրական համաձայնագրով այդ բաժնետիրոջը տրված առանձնահատուկ իրավունքները, որոնց ուժով նա կարողանում է կանխորոշել հսկվող ՎԲԸ-ի որոշումները: Բացի այդ, ՎԲԸ-ների պարագայում որոշակի առանձնահատկություններ կան նաև ՎԲԸ-ն հսկող սուբյեկտների շրջանակի հետ կապված: Մասնավորապես, եթե ընդհանուր մոտեցման համաձայն հսկողության հարաբերություններ կարող են ծագել երկու տարբեր տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների միջև, ապա ՎԲԸ-ների պարագայում ՎԲԸ-ն հսկող սուբյեկտ կարող է դառնալ նաև նրա վենչուրային ներդրողը: Վկայակոչված խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկվել է վենչուրային ներդրողների՝ հատուկ իրավունքների, արտոնությունների և առավելությունների ուժով կորպորացիայի որոշումները կանխորոշելը ևս նախատեսել որպես հսկողության (հսկող-հսկվող) հարաբերությունների առաջացման հիմք, սակայն նրանց նկատմամբ կորպորատիվ պատասխանատվության միջոցներ կիրառելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՎԲԸ-ներին բնութագրական տնտեսական և/կամ հսկողական բաղադրիչները հնարավորություն են տալիս սահմանափակելու վենչուրային ներդրողների պատասխանատվությունը կամ ազատելու դրանից:

7. Բաժնետերերի և այլ սուբյեկտների միջև առաջացող կորպորատիվ հարաբերությունների կարգավորման գործում կարևոր դերակատարություն ունեցող բաժնետիրական համաձայնագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ ԲԸ օրենքով նախատեսված այս ինստիտուտի օրենսդրական

կարգավորման շրջանակից դուրս են մնացել միջազգային պրակտիկայում կիրառվող որոշ կարևոր տարրեր, իսկ Հայաստանի Հանրապետության ՔՕ-ն և կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ օրենքները նշված հարաբերությունները ընդհանրապես կարգավորման չեն ենթարկում: Նշված իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերը վենչուրային ներդրումների ներգրավման առումով դարձնում է ոչ գրավիչ:

Գտնում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետությունում իրավական կարգավորման շրջանակներից դուրս են մնացել բաժնետիրական համաձայնագրին զուգահեռ կիրառվող ներդրման համաձայնագրի կարգավորմանը վերաբերող հարաբերությունները, իսկ բաժնետիրական համաձայնագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վրա հասնող պատասխանատվության միջոցների շրջանակը սահմանափակված է միայն ՔՕ-ով նախատեսված միջոցներով: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ՎԲԸ-ների նախատեսման պարագայում, հաշվի առնելով նրանց բաժնետերերի շրջանակի և նման ընկերությունների կապիտալի ձևավորման առանձնահատկությունները, անհրաժեշտ է օրենսդրությամբ որպես պայմանագրի ինքնուրույն տեսակ նախատեսել ներդրման համաձայնագիրը, ինչպես նաև պատասխանատվության առանձնահատուկ միջոցներ կիրառելու հնարավորություն, ինչը թույլ կտա ներդրումների կատարումը կանոնակարգել ներդրման համաձայնագրով, իսկ վենչուրային բաժնետերերի կողմից բաժնետիրական կամ ներդրման համաձայնագրով նախատեսված պարտականությունների կատարումը ապահովել պատասխանատվության կիրառման լրացուցիչ միջոցներով:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՎԲԸ-ներում ներդրման կարգը, պայմանները, կողմերի պատասխանատվությունը և այլ փոխհարաբերությունները լիարժեք և ամբողջական կանոնակարգելու նպատակով առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ նախատեսել ներդրման համաձայնագրի և/կամ ներդրման ու բաժնետիրական մեկ համաձայնագրի մոդելը, իսկ որպես այդ համաձայնագրերով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կիրառվող

պատասխանատվության ինքնատիպ միջոցներ՝ սույն հետազոտության շրջանակներում վեր հանված վնասների հատուցման, օպցիոնների տրամադրման, դեֆոլտի, հարկադիր կարգով ներդրողի լիազորությունների դադարեցման և զեղչերից զրկելու միջոցները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Տվյալ հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ համալիր ու համակարգված ձևով ներկայացվել են ՎԲԸ-ների կառավարման մարմինների համակարգին ու պատասխանատվության առանձնահատկություններին վերաբերող բազմաթիվ տեսագործնական հարցեր և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, որոնք կարող են հիմք լինել ոլորտի հետագա զարգացման, տեսական հետազոտությունների և օրենսդրական բարեփոխումների (կատարելագործման) համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրանում արտացոլված առաջարկները կարող են օգտագործվել իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև կորպորացիաների կողմից իրենց գործունեության ընթացքում առաջացող գործնական (պրակտիկ) խնդիրների կարգավորման նպատակով:

Միաժամանակ, ատենախոսությունը և դրա արդյունքները, որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ, կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում կորպորատիվ իրավունքի, բաժնետիրական իրավունքի և հարակից այլ ուսումնական դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքները հեղինակի կողմից ներկայացվել են հրապարակված մի շարք գիտական հոդվածների տեսքով, որոնք տեղ են գտել ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային տարբեր գիտական ժողովածուներում և ամսագրերում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, դրանցում ներառված 8 պարագրաֆներից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների և դրանց կառավարման մարմինների էությունը» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

«**Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հասկացությունը, հատկանիշները և վենչուրային բաժնետիրական ընկերությունները որպես կորպորատիվ տիպի իրավաբանական անձի ինքնուրույն տեսակ**» վերտառությամբ 1.1. պարագրաֆում անդրադարձ է կատարվել կորպորացիա հասկացությանը, վերլուծվել են կորպորատիվ տիպի և ոչ կորպորատիվ (ունիտար) տիպի կորպորացիաների հատկանիշները, առանձնահատկությունները և դրանց տարբերակման հարցերը, բացահայտվել են կորպորացիաների կառավարման մարմինների համակարգը, մոդելները, դասակարգումները, ինչպես նաև ներկայացվել են ՎԲԸ-ների էությունը, բնորոշ գծերն ու առանձնահատկությունները՝ առաջարկելով ՎԲԸ-ի՝ որպես բաժնետիրական ընկերության ինքնուրույն տեսակի հայեցակարգը:

«Ժողովը՝ որպես վենչուրային բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմին» վերտառությամբ 1.2. պարագրաֆում հետազոտվել են ընդհանուր (բաց և փակ) և հատուկ (ՎԲԸ) տեսակի բաժնետիրական ընկերությունների ժողովի՝ որպես կառավարման բարձրագույն մարմնի էությունը, կազմավորման և գործունեության հարցերը, ինչպես նաև վեր են հանվել ՎԲԸ-ների բաժնետերերի ընդհանուր ժողովի առանձնահատկությունները, վենչուրային ներդրողներին վերապահված հատուկ իրավունքները, արտոնությունները և առավելությունները, առաջարկվել է ՀՀ օրենդրությամբ ամրագրել վենչուրային ներդրողների տնտեսական և հսկողական իրավունքները:

«Խորհուրդը՝ որպես վենչուրային բաժնետիրական ընկերության ընդհանուր ղեկավարումն իրականացնող մարմին» վերտառությամբ 1.3.

պարագրաֆում ուսումնասիրվել են ընդհանուր բաժնետիրական ընկերությունների և ՎԲԸ-ների խորհրդի՝ որպես ընդհանուր ղեկավարումն իրականացնողի մարմնի էությունը, մոդելները, կառավարչական և հսկողական լիազորությունները, խորհրդի անդամների տարատեսակները, ինչպես նաև ՎԲԸ-ների խորհրդի դիտորդ անդամների իրավական կարգավիճակը, վերջիններիս վերապահվող պաշտպանիչ դրույթները և փոխհատուցման կառուցակարգերը, և առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ կարգավորել ՎԲԸ-ների խորհրդի քննարկված առանձնահատկությունները:

«Գործադիր մարմինը՝ որպես վենչուրային բաժնետիրական ընկերության ընթացիկ ղեկավարումն իրականացնող մարմին» վերտառությամբ 1.4. պարագրաֆում վերլուծվել են ընդհանուր բաժնետիրական ընկերությունների և ՎԲԸ-ների գործադիր մարմնի՝ որպես ընթացիկ ղեկավարումն իրականացնող մարմնի բնույթն ու բովանդակությունը, միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինները, դրանց տարբերությունները, կառավարչի և կառավարող կազմակերպության կողմից գործադիրի լիազորությունների իրականացման հարցերը, բացահայտվել են ՎԲԸ-ների հատուկ գործադիր մարմինը և գործադիր մարմնի կառավարման իրավունքները՝ առաջարկելով ՀՀ օրենսդրությամբ կանոնակարգել ՎԲԸ-ների գործադիր մարմնին բնորոշ յուրահատկությունները:

Երկրորդ գլուխը՝ «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների պատասխանատվությունը և դրա առանձնահատկությունները» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

«Վենչուրային բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների պատասխանատվության հասկացությունը, հատկանիշները և առանձնահատկությունները» վերտառությամբ 2.1. պարագրաֆում բացահայտվել են կորպորացիաների և ՎԲԸ-ների կառավարման մարմինների պատասխանատվության էությունը, ծագման հիմքերը, պայմանները, աղբյուրները, ֆիդուցիար պարտականությունների խախտումները, մեղքի և դրա ապացուցման առանձնահատկությունները, պատասխանատվության միջոցները, ինչպես նաև ՎԲԸ-ների վենչուրային ներդրողների նկատմամբ կիրառելի պատասխանատվության հատուկ միջոցները և մյուս առանձնա-

հատկությունները՝ առաջարկելով խնդրո առարկա հարցերը լիարժեք կանոնակարգել նաև ՀՀ օրենսդրության շրջանակներում:

«Վենչուրային բաժնետիրական ընկերությունը հսկող անձանց պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ 2.2. պարագրաֆում ուսումնասիրվել են հսկող և հսկվող կորպորացիաները, ներառյալ՝ ՎԲԸ-ները, հսկողության առաջացման հիմքերը, պայմանները, տեսակները, «կորպորատիվ շղարշի հաղթահարման» դոկտրինան և «ներթափանցող պատասխանատվության» կառուցակարգը, կիրառման ուղենիշները, ինչպես նաև ՎԲԸ-ների վենչուրային ներդրողներին վերապահված հատուկ իրավունքների, արտոնությունների և առավելությունների ուժով ծագող հսկողության հարցերը՝ առաջարկելով ՀՀ օրենսդրությամբ հստակություն մտցնել ՎԲԸ-ների մասով հսկողության հարաբերությունների առաջացման հիմքերի առնչությամբ:

«Իրավունքի չարաշահումը և վենչուրային բաժնետիրական ընկերության պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ 2.3. պարագրաֆում քննարկվել են կորպորատիվ հարաբերություններում, այդ թվում՝ ՎԲԸ-ներում իրավունքի չարաշահման ընդհանուր գծերը, հիմքերը, պայմանները, հատկանիշները, տարատեսակները, պաշտպանության ձևերը և կիրառվող պատասխանատվության միջոցները, ինչպես նաև ՎԲԸ-ի վենչուրային ներդրողների կողմից իրենց վերապահված իրավունքների, արտոնությունների և առավելությունների չարաշահման և պատասխանատվության առանձնահատկությունները՝ առաջարկելով կիրառվող պատասխանատվության միջոցները սահմանել և իրավակարգավորել ՀՀ օրենսդրությամբ:

«Բաժնետիրական համաձայնագիրը և դրա խախտմամբ պայմանավորված վենչուրային բաժնետիրական ընկերության պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ 2.4. պարագրաֆում անդրադարձ է կատարվել կորպորացիաների և հատկապես ՎԲԸ-ների գործունեության ընթացքում կնքվող բաժնետիրական և ներդրման համաձայնագրերին, դրանց առարկային, նպատակներին, կողմերին (մասնակիցներին), դրանցից բխող պարտավորությունների կատարման ապահովման միջոցներին և պատասխանատվության միջոցներին, ինչի արդ-

յունքում առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ տեղայնացնել և ներդնել ներդրման համաձայնագրի գաղափարը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Անդրադառնալով խորհրդին միաժամանակ կառավարման և հսկողության գործառույթներ և լիազորություններ վերապահելուն՝ ընդգծվել է, որ նպատակահարմար և ընդունելի չէ կառավարչական և հսկողական լիազորությունների (գործառույթների) կենտրոնացումը մեկ մարմնի (խորհրդի) ձեռքում, քանի որ՝

ա) որոշ դեպքերում գործադիր մարմնի անդամները, միաժամանակ դառնալով խորհրդի անդամ, փաստացի հսկողություն են իրականացնում իրենք իրենց նկատմամբ, ինչը խնդիրներ կարող է հարուցել դրա օբյեկտիվության և արդյունավետության առումով, և

բ) խորհրդի կողմից կառավարչական լիազորությունների իրականացման պարագայում կարող է առաջ գալ նաև խորհրդի նկատմամբ հսկողության հարցը, որը ոչ բոլոր դեպքերում է հնարավոր մշտապես ապահովել ժողովի կողմից:

2. Կորպորացիայի կառավարման մարմնի անդամին պատասխանատվության ենթարկելիս նրա ոչ իրավաչափ վարքագծի գնահատումը պետք է իրականացվի կոնկրետ դեպքի (որոշման, գործողության կամ անգործության) առանձնահատկությունների հաշվառմամբ: Չի բացառվում, սակայն, որ կորպորացիային պատճառված վնասները լինեն ոչ թե մեկ կոնկրետ որոշման կամ գործողության (անգործության) հետևանք, այլ որոշակի ժամանակահատվածում իրականացված գործունեության արդյունք, որպիսի պայմաններում, մեր կարծիքով, պետք է գնահատական տալ այդպիսի գործունեության իրավաչափությանը:

3. Կորպորատիվ պատասխանատվության պարագայում վնաս պատճառողի մեղքի ապացուցման պարտականությունը փաստացի ընկած է հայցվորի վրա, ուստի, որպես կանոն, գործում է կորպորացիայի կառավարման մարմինների անդամների գործողությունների իրավաչափության կանխավարկածը (օրենսդրությամբ և դատական պրակտիկայում կարող են նախատեսվել իրավիճակներ, երբ որոշակի հանգամանքների ուժով գոր-

ծում է մեղավորության կանխավարկածը, ինչը չի բացառում դա հերքելու/վիճարկելու հնարավորությունը):

4. Կորպորատիվ պատասխանատվության պարագայում կիրառվում է նաև «գործարարական ռիսկի կանոնը» (business judgement rule), որի համաձայն՝ պատասխանատվության ենթարկվող անձը ունի ընկերության համար ոչ միտումնավոր անշահավետ որոշումներ ընդունելու իրավունք սովորական ձեռնարկատիրական և այլ տնտեսական ռիսկի պայմաններում, այսինքն՝ անձը ճանաչվում է անմեղ (բարեխիղճ և ողջամիտ գործելու պարտականությունը չխախտած), եթե նա դրսևորել է այն աստիճանի հոգատարություն և շրջահայեցություն, որը, շրջանառության բնույթից ելնելով, նրանից պահանջվում է սովորական ձեռնարկատիրական ռիսկի պայմաններում:

5. Դուստր ընկերությունների վերաբերյալ ՔՕ և ԲԸ օրենքի միջև կա որոշակի անհամապատասխանություն՝ կապված ընկերության որոշումները օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշելու հնարավորություն ընձեռելու և պարտադիր ցուցումներ տալու իրավունքի հետ: Մեր գնահատմամբ, հարկ է վերանայել ՔՕ կարգավորումը և այն համապատասխանեցնել ԲԸ օրենքին և նախատեսել, որ հսկողության հարաբերություններ կարող են առաջանալ ոչ միայն հսկողի կողմից հսկվողի կանոնադրական կապիտալում մասնակցության և պայմանագրի հիման վրա, այլև օրենքով չարգելված ցանկացած այլ կառուցակարգի պայմաններում:

6. Հաշվի առնելով հիմնական-դուստր (հսկող-հսկվող) ընկերությունների պատասխանատվության հատկանիշները՝ կարելի է արձանագրել, որ հսկող և հսկվող կորպորացիաների պատասխանատվության առաջացման պարտադիր բաղադրիչներն են՝

ա) առնվազն 2 կորպորացիաների առկայությունը,

բ) հսկող կորպորացիայի կողմից հսկվողի (կամ հսկվողների) որոշումները կանխորոշելու (ներառյալ՝ պարտադիր ցուցումներ տալու) իրավունքը/հնարավորությունը,

գ) պատասխանատվությունը ծագում է հսկող կորպորացիայի ցուցումների համաձայն հսկվողի կնքած գործարքների կատարման, վնասներ պատճառելու, սնանկության, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Միաժամանակ, հարկ է նշել, որ բացի հսկող կորպորացիաներից, հսկվող կորպորացիայի նկատմամբ հսկողություն կարող է իրականացնել նաև կորպորացիան հսկող անձը:

7. ԲԸ օրենքի 38.1-րդ հոդվածով տրված սահմանման մեջ, մեր կարծիքով, հարկ է ավելացնել բաժնետիրական համաձայնագրի նպատակը, այն է՝ բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է դրա մասնակիցների (կողմերի) շահերի բավարարման, ինչպես նաև ընկերության կազմավորման, կառավարման, գործունեության, վերակազմակերպման, լուծարման շրջանակներում ծագող հարցերի արդյունավետ և օպերատիվ լուծման նպատակով:

8. Բաժնետիրական համաձայնագիրը կարող է ինչպես հստակեցնել, լրացնել օրենսդրության և/կամ կանոնադրության դրույթները, այնպես էլ կանոնակարգել դրանցով չկարգավորված (ներառյալ՝ պատասխանատվության) հարցերը: Բացի այդ, կարծում ենք, որ ընկերությունները պարտավոր են խուսափել օրենսդրության, կանոնադրության և բաժնետիրական համաձայնագրի միջև հակասություններից (միմյանց հակասող դրույթներ ամրագրելուց), իսկ դրանց առկայության դեպքում պետք է գործի օրենք-կանոնադրություն-բաժնետիրական համաձայնագիր աստիճանակարգությունը: Ընդ որում՝ այդ օղակներից յուրաքանչյուր հաջորդը գործում է նախորդին չհակասելու պայմանով:

9. Բաժնետիրական համաձայնագրին համարժեք համաձայնագրեր, ըստ մեզ, կարող ենք կնքվել նաև այլ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց մասնակցությամբ հարաբերություններում և դրան առնչվող կարգավորումները (ներառյալ՝ պատասխանատվությանը վերաբերելի) mutatis mutandis կիրառելի են նաև վերջինների նկատմամբ՝ դրանց առանձնահատկությունների հաշվառմամբ:

10. Եզրահանգումների մաս է կազմում աշխատանքի հավելվածում ներկայացված «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. "THE LIABILITY OF CORPORATE GOVERNANCE BODIES AS A PHILOSOPHICAL-LEGAL CATEGORY", W I S D O M, 2(26), 2023, Khachatur

Abovian Armenian State Pedagogical University, Department of Philosophy and Logic named after Academician Georg Brutian, 223-231 էջերը:

2. “SHAREHOLDERS’ AGREEMENT IN THE CROSSROADS OF PHILOSOPHY OF LAW”, W I S D O M, 4(28), 2023, Khachatur Abovian Armenian State Pedagogical Univuersity, Department of Philosophy and Logic named after Academician Georg Brutian, 155-163 էջերը:

3. “CERTAIN ISSUES OF RIGHTS CERTIFIED BY COMMON AND PREFERRED SHARES”, Պետություն և իրավունք, N 1 (95) 2023, ԵՊՀ հրատ., Երևան, 59-67 էջերը:

4. “THE CONCEPT, CHARACTERISTICS OF CORPORATE TYPE LEGAL ENTITIES (CORPORATIONS) AND DESCRIPTION OF GOVERNING BODIES”, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022, ԵՊՀ հրատ., Երևան, 84-98 էջերը:

5. «ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Պետություն և իրավունք, N 3 (97) 2023, ԵՊՀ հրատ., Երևան, 89-102 էջերը:

6. «ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑԻԿ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ», Դատական իշխանություն ապրիլ-սեպտեմբեր 2023 4-9 (286-291), 33-42 էջերը:

7. «ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՊԱՏԱՍ-ԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Դատական իշխանություն հոկտեմբեր-դեկտեմբեր 2023 10-12 (292-294), 57-68 էջերը:

8. «ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ», Արդարադատություն, 2023 1 (58), 63-70 էջերը:

9. «ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆ ՀՍԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Արդարադատություն, 2023 2 (59), 11-18 էջերը:

10. «ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Բանբեր Արդարադատության Ակադեմիայի, № 1 (9), 2023, Արդարա-դատության Ակադեմիա, 97-105 էջերը:

КАРЕН АРТАКОВИЧ МЕЛИКСЕТЯН

СИСТЕМА ОРГАНОВ УПРАВЛЕНИЯ ВЕНЧУРНЫХ АКЦИОНЕРНЫХ ОБЩЕСТВ И ХАРАКТЕРИСТИКИ ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Резюме

Республика Армения регулярно вносит законодательные изменения, направленные на создание благоприятного правового поля для юридических и физических лиц-резидентов, осуществляющих предпринимательскую деятельность в Армении, а также нерезидентов, намеревающихся инвестировать в Армении, тем самым обеспечивая непрерывное развитие сферы.

Одной из важных движущих сил экономики Армении являются компании, вовлеченные в сферу информационных технологий (далее «ИТ»), основная часть которых на стадии создания находится в форме стартапа, то есть изначально нуждается в привлечении финансовых и других ресурсов. По этим причинам основатели стартапов пытаются включить в число своих участников в качестве инвесторов других лиц, имеющих возможность предоставлять такие ресурсы.

На уровне мировой экономики, а в последние годы в Армении также растет интерес к стартапам, особенно к компаниям, действующим в сфере ИТ, различные инвесторы, в том числе различные венчурные компании, ангел-инвесторы и другие лица (далее «венчурный инвестор») предоставляют им финансовые и другие средства в обмен на участие.

На уровне различных государственных органов РА неоднократно озвучивалась мысль о том, что развитие ИТ-сферы имеет первостепенное значение для Армении, поскольку в условиях нехватки или отсутствия других ресурсов следует стараться развивать те отрасли экономики, которые основаны на знаниях и могут быстро обеспечить высокий экономический рост. Одним из важнейших условий увеличения числа и развития таких компаний является формирование законодательного поля, которое будет способствовать привлечению инвестиций и обеспечит стабильные законодательные гарантии для инвестора с точки зрения обеспечения и защиты прав.

Изучение организационно-правовых форм юридических лиц, предусмотренных законодательством РА, позволяет утверждать, что организационно-правовые формы юридических лиц, предусмотренные законодательством РА, не позволяют эффективно решать и реализовывать

те задачи и цели, которые ставятся перед современными стартап-компаниями, их органами управления, участниками, венчурными инвесторами.

Учитывая вышеизложенное, в рамках диссертации был обоснован необходимость создания нового типа акционерного общества - «венчурного акционерного общества» (далее «ВАО»). Внедрение ВАО как акционерного общества нового типа позволит законодательно оригинально регулировать особенности корпоративного управления ВАО, формулировать и моделировать права и обязанности участников ВАО, а также венчурных инвесторов в соответствии с современными требованиями, особенности ответственности субъектов, включенных во внутрикорпоративные отношения.

Следовательно, выявление и решение указанных проблем делает изучение этой темы и представление теоретических-практических предложений необходимыми.

Диссертация, с учетом поставленных перед ней целей и задач, является первой глубокой и всесторонней работой в отечественной юриспруденции, в рамках которой была обоснована идея создания ВАО как нового типа акционерного общества, в рамках сопоставительного правового анализа организационно-правовых форм юридических лиц корпоративного типа, предусмотренных законодательством РА, была исследована система органов управления ВАО, характеристики и признаки этих органов, особенности их ответственности.

Работа имеет важное теоретическое и практическое значение. Теоретическая значимость исследования заключается в том, что в комплексной и систематизированной форме были представлены многочисленные теоретические- практические вопросы, касающиеся системы и особенностей ответственности органов управления ВАО, и предложения по их решению, которые могут стать основой для дальнейшего развития отрасли, теоретических исследований и законодательных реформ (совершенствования).

Практическая значимость работы заключается в том, что отраженные в ней предложения могут быть использованы в правоприменительной практике, а также в целях урегулирования корпорациями практических проблем, возникающих в ходе их деятельности.

Результаты исследования были представлены автором в виде ряда опубликованных научных статей, которые были опубликованы как в армянских, так и в различных международных научных сборниках и журналах.

KAREN ARTAK MELIKSETYAN

THE SYSTEM OF MANAGEMENT BODIES OF VENTURE JOINT-STOCK COMPANIES AND THE SPECIFICS OF LIABILITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Summary

The Republic of Armenia regularly introduces legislative changes aimed at creating a favorable legal environment for resident legal entities and individuals engaged in business activities in Armenia, as well as for non-residents intending to invest in Armenia, thereby ensuring the continuous development of the sphere.

One of the important driving forces of the Armenian economy are companies involved in the field of information technology (hereinafter referred to as "IT"), most of which at the stage of creation are in the form of a startup, that is, they initially need to attract financial and other resources. For these reasons, the founders of startups are trying to include among their participants as investors other people who have the opportunity to provide such resources.

At the level of the global economy, and in recent years there has also been a growing interest in startups in Armenia, especially companies working in the IT sector, various investors, including various venture capital companies, angel investors and others (hereinafter referred to as "venture investor") provide them with financial and other funds in exchange for participation.

At the level of various government agencies of the Republic of Armenia, the idea has been repeatedly voiced that the development of the IT sector is of paramount importance for Armenia, since in conditions of shortage or lack of other resources, one should try to develop those sectors of the economy that are based on knowledge and can quickly ensure high economic growth. One of the most important conditions for increasing the number and development of such companies is the formation of a legislative field that will help attract investment and provide stable legislative guarantees for investors in terms of ensuring and protecting their rights.

The study of the organizational and legal forms of legal entities provided for by the legislation of the Republic of Armenia allows us to assert that the organizational and legal forms of legal entities provided for by the legislation of the Republic of Armenia do not allow us to effectively solve and implement

those tasks and goals that are set for modern startup companies, their management bodies, participants, venture investors.

Considering the above, the thesis justified the need to create a new type of joint-stock company - "venture joint-stock company" (hereinafter referred to as "VJSC"). The introduction of VJSC as a new type of joint-stock company will allow to regulate legislatively the specifics of VJSC corporate governance in an original way, formulate and model the rights and obligations of VJSC participants, as well as venture investors in accordance with modern requirements, and the specifics of the responsibility of entities included in intra-corporate relations.

Therefore, the identification and solution of these problems makes the study of this topic and the presentation of theoretical and practical proposals necessary.

The dissertation, taking into account the goals and objectives set for it, is the first in-depth and comprehensive work in domestic jurisprudence, within the framework of which the idea of creating a VJSC as a new type of joint-stock company was substantiated, within the framework of a comparative legal analysis of corporate-type legal entities of organizational and legal forms provided for by the legislation of the Republic of Armenia, the system of VJSC management bodies, characteristics and features of these bodies, peculiarities of their liability were investigated.

The work has important theoretical and practical significance. The theoretical significance of the study lies in the fact that numerous theoretical and practical issues related to the system and features of the liability of the VJSC management bodies and proposals for their solution were presented in a comprehensive and systematic form, which can become the basis for further development of the sphere, theoretical research and legislative reforms (improvement).

The practical significance of the work lies in the fact that the proposals reflected in it can be used in law enforcement practice, as well as in order for corporations to resolve practical problems arising in the course of their activities.

The results of the research were presented by the author in the form of a number of published scientific articles, which were published both in Armenian and in various international scientific collections and journals.